



# Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՑԻ

ՅԻԱՍԱԿԻ Չորրորդ Կիրակի  
15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024

## ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (38.1-8)

**Ա**յն օրերուն Եզեկիա թագաւոր  
ահիւանդացաւ եւ մահուան  
անկողին ինկաւ: Եսայի մարգարէն,  
Ամոսի որդին, անոր քով եկաւ եւ ըսաւ.  
«Տէրը այսպէս կ'ըսէ.- Քու տանդ  
համար կարգադրութիւն ըրէ՝ յաջորդդ  
նշանակելով, որովհետեւ կեանքիդ  
օրերը վերջացած են եւ մահդ մօտ է»:

Եզեկիա երեսը պատին դարձուց եւ  
այսպէս աղօթեց Տիրոջ. «Կ'աղաչեմ, ո՛վ  
Տէր, յիշէ թէ արդար եւ ուղղամիտ եղայ  
քու աչքիդ, եւ ըրի միայն այն ինչ որ  
հաճելի է քեզի»: Եւ Եզեկիա դառնօրէն  
լացաւ:

Այն ատեն Տէրը հրամայեց Եսայի  
մարգարէին, ըսելով. «Գնա՛ եւ  
Եզեկիային ըսէ.- Այսպէս կ'ըսէ Տէրը,  
քու հօրդ՝ Դաւիթի Աստուածը. «Լսեցի  
աղօթքդ, տեսայ արցունքդ եւ ահա  
քեզի տասնըհինգ տարի եւս կեանք կու  
տամ: Այլեւ Ասորեստանի թագաւորին  
ձեռքէն պիտի ազատեմ թէ՛ քեզ եւ թէ՛  
այս քաղաքը, Երուսաղէմը, որ անձամբ  
պիտի պաշտպանեմ»: Եւ որպէսզի  
գիտնաս թէ Աստուած իր խոստումը  
պիտի կատարէ, Տէրը հետեւեալ  
նշանը կու տայ քեզի: Տե՛ս, քու հօրդ՝  
Աքազի արեւու ժամացոյցին ստուերը  
տասներորդ աստիճանին վրայ ինկեր է  
հիմա. բայց Տէրը զայն տասը աստիճան

ետ պիտի դարձնէ»:

Եւ իրապէս, ստուերը իր ինկած տեղէն  
տասը աստիճան ետ գնաց:

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (1.1-14)

**Ա**նցեալին բազմաթիւ անգամներ  
Աստուած մեր հայրերուն խօսեցաւ  
մարգարէներուն միջոցաւ, իսկ այս  
վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր  
Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն  
բանի ժառանգորդ կարգեց եւ անոր  
միջոցաւ էր, որ տիեզերքը ստեղծեց:  
Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր  
էութեան ճշգրիտ պատկերը, որ իր  
խօսքին զօրութեամբ տիեզերքը կը  
պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ  
ետք՝ երկինքի մէջ նստաւ Աստուծոյ՝  
Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Ան շատ աւելի բարձր է հրեշտակներէն,  
ինչպէս Աստուծմէ իրեն տրուած  
անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր  
մէկ հրեշտակին երբեւիցէ Աստուած  
ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօ՛ր քեզ  
ծնայ»: Կամ որո՞ւ ըսաւ. «Ես անոր հայր  
պիտի ըլլամ եւ անիկա՛ ինծի որդի»:  
Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին  
աշխարհ կը զրկէր, ըսաւ. «Աստուծոյ  
բոլոր հրեշտակները թող պաշտեն  
զայն»:



Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ.

«Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

*Մինչդեռ Որդիին կ'ըսէ.*

«Քու աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտեանական է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՛վ Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւրով օծեց քեզ քու ընկերներէդ աւելի»:

*Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ.*

«Դուն, ո՛վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը, եւ երկինքը քու ձեռագործդ է: Անոնք պիտի կորսուին. բայց դուն կաս եւ կը մնաս: Անոնք հագուստի պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս պիտի ծալես զանոնք եւ հագուստի պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

*Բայց հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք.*

«Աջ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտներուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

*Չէ՞ որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը ղրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն:*

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (17.1-10)**

**Յ**իսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղութիւններ անպայման որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով

ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար որ իր վզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զղջամ, պէտք է ներես իրեն»:

*Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»:* Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, “արմատախի՛ղ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ՛”, վստահ եղէք որ պիտի հնազանդի ձեզի»:

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայմը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. “Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր”։ Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. “Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ ինծի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել եւ խմել”։ Կը կարծէ՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. “Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք”»:

«Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, “արմատախի՛ղ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ՛”, վստահ եղէք որ պիտի հնազանդի ձեզի»: